


Արտակ Վարդանի Վարդանյան



ԿՆՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Վարդանի Վարդանյանը ծնվել է 1951 թ. մայիսի 4-ին, Նախիջեանի Ազնաբերդ գյուղում: 1957թ. ընդունվել է իր ծննդավայրի միջնակարգ դպրոցը, որի 8-րդ դասարանն ավարտելուց հետո՝ 1965-ին, տեղափոխվել է Երեւան:

1968-ին ավարտել է Երեւանի թիվ 5 միջնակարգ դպրոցը եւ նույն թվականին ընդունվել Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը: Այն ավարտել է 1973-ին, իսկ 1988-ին՝ նույն համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի լրագրության բաժինը:

1973-1994 թթ. նշանակումով աշխատել է Երեւանի մաթեմատիկական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես ճարտարագետ: Աշխատանքին զուգահեռ

զբաղվել է բարբառագիտությամբ, բանահավաքությամբ, ազգագրությամբ, լրագրությամբ:

1978 թվականից համագործակցում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի հետ: 2004թ. «Հայոց լեզու» մասնագիտությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հայաստանի լրագրողների միության անդամ է 1994-ից:

1994-ից առ այսօր աշխատում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում, 1999-ից՝ որպես արձանագրային բաժնի վարիչ:

Հեղինակ է հայ բարբառագիտությանը, ազգագրությանը, բանահյուսությանը նվիրված շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների, հարյուրավոր հրապարակախոսական, գիտահանրամատչելի հոդվածների, հոդվածաշարերի, գրական ստեղծագործությունների: Հեղինակ է վեց գրքի՝ «Իմ կարոտները» բանաստեղծական ժողովածուի (2000), «Ազնաբերդ. նախիջեւանահայության վերջին ամրոցը» պատմաբանասիրական ուսումնասիրության (2000), «Նժդեհյան մասունքներ» հուշապատման (2001), «Ալ խնձորիկ» (1993), «Կաքավիկ» (2004) մանկական բանահյուսական ժողովածուների եւ «Վայոց ձորի միջբարբառը» մենագրության (2004):

1996-98թթ. եղել է «Նախիջեւան» հայրենակցական միության նախագահը:

Դպրոցական տարիներից, Իրանի ռադիոյի հաղորդումների միջոցով, տարվել է պարսկերենով եւ իրանական մշակույթով: Հետագայում ինքնուրույն սովորել է պարսկերեն եւ որոշ հաջողության հասել: Հրապարակել է իրանական մշակույթին, հայ-իրանական բարեկամությանը նվիրված հոդվածներ, երկու ժողովուրդների բարեկամությանն է նվիրել նաեւ «Նովրուզի ծաղիկ» բանաստեղծական շարքը:

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*քանասիրական գիտությունների թեկնածու***ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՔԱՐՏԵԶԸ**

1921 թվականի մարտի 16-ի Կարսի տխրահռչակ դաշնագրով Խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց հետո բնիկ հայկական Նախիջեանի տարածքում Ադրբեջանի վարած հայտնի հակահայ քաղաքականությամբ պետական մակարդակով ոչ միայն կազմակերպվեց բնիկ հայ բնակչության «սպիտակ» ցեղասպանությունը, մշակույթի համաշխարհային գանձարանի մասը կազմող բազմաթիվ հայկական հուշարձանների ոչնչացումը, այլև իրենց իսկ բնօրրանում մարեցին ամբողջ շարք տոհմիկ հայ բարբառներ:

Նախիջեանի տարածքն ընդգրկում է պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն եւ Նախճավան, Այրարատ աշխարհի Շարուր, Սյունիք աշխարհի Ճահուկ-Շահապունիք եւ Երնջակ գավառները: Պատմական տարբեր մահանգների, հետեւաբար եւ ազգագրական տարբեր շրջանների խաչմերուկ լինելու հանգամանքը, ինչպես նաեւ բնակչության զանգվածային տեղաշարժերը նպաստել են Նախիջեանի տարածքի բարբառային բազմազանությանը:

20-րդ դարի սկզբին Նախիջեանի տարածքն ընդգրկում էր մոտ յոթ տասնյակ հայաբնակ բնակավայր, որոնց գերակշիռ մասը (38 բնակավայր) խոսում էր Խոյի բարբառի խոսվածքներով (1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրով Խոյ-Սալմաստից ներգաղթածները), քանի որ 1604-1605 թվականների շահաբասյան հայտնի բռնագաղթից հետո Նախիջեանի բնիկ հայ բնակավայրերի մեծագույն մասն ամայացել էր: Չնայած պատմական հանգամանքների բերումով տարածքում տեղի ունեցած մեծ տեղաշարժերին՝ այնտեղ պահպանվել էին նաեւ բնիկ խոսվածքներ՝ Ագուլիսի բարբառը (Ագուլիս քաղաք, շրջակա գյուղեր), Ջուղայի բարբառը (Հին Ջուղայի տարածքում գտնվող Ջուղա գյուղը), Արարատյան բարբառի Աստապատի խոսվածքը (Աստապատ, Կարմիր վանք գյուղեր), Վայոց ձորի միջբարբառը

(Նախնական գավառի Ազնաբերդ եւ Ճահուկ-Շահապունիք գավառի Օծոփ գյուղեր), Արցախի եւ Մեղրու բարբառների խոսվածքները (համապատասխանաբար Երնջակ եւ Գողթն գավառների հյուսիսային գյուղեր): Բնակչության ներքին տեղաշարժերի հետեւանքով առաջացել էին նաեւ միջխոսվածքներ՝ Նախիջեւան-Այլապատի (Խոյի եւ Արարատյան բարբառներ), Ջուլֆայի (Ջուղայի եւ Խոյի), Որդուարի (Ագուլիսի եւ Խոյի) եւ այլն:

Նախիջեւանի բարբառային քարտեզը 20-րդ դարում կարելի է առանձնացնել ըստ հետեւյալ հիմնական ժամանակագրական փուլերի՝

ա) 1918-1920թթ. իրադարձությունների նախօրյակ, երբ հայ բնակչությունը կազմում էր տարածքի բնակչության մոտ 50 տոկոսը (մեծամասնությունը).

բ) 1924 թվականի՝ Նախիջեւանի ԻԽՍՀ կազմավորման նախօրյակ, երբ հայ բնակչությունը կազմում էր տարածքի բնակչության մոտ 20 տոկոսը.

գ) 1988 թվականի՝ Նախիջեւանի վերջնական հայաթափման նախօրյակ, երբ հայ բնակչությունը կազմում էր տարածքի բնակչության ընդամենը 2 տոկոսը:

Անցյալ դարասկզբի Նախիջեւանի հայ բնակչության մասին առկա վիճակագրական-տեղագրական տվյալների¹ եւ տարածքում առկա խոսվածքների մասին մեր ունեցած տեղեկությունների հիման վրա ստորեւ ներկայացնում ենք տարածքի հայ բնակչություն ունեցող բնակավայրերը՝ ըստ գավառների (Աղյուսակ 1) եւ հիշյալ երեք ժամանակագրական փուլերում դրանցում առկա խոսվածքները (Աղյուսակ 2):

¹ Ա.Գ.ո (Հովհաննես Տեր-Սարտիրոսյան). «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.)», Երեւան, 1907, էջ 64-67:

Աղյուսակ 2

Ազուլիսի (8 բնակավայր)	Ջուղայի (2 բնակավայր)	Ատուպատի (2 բնակավայր)
ՈՐԳՈՒՄՐ Դիսար Հանդամեջ Ներքին Ազուլիս Վերին Ազուլիս Տանակերտ Յղնա Քաղաքիկ	ՋՈՒԼՖԱ Ջուղա	Ատուպատ Կարմիր վանք

Վայոց ձորի (2 բնակավայր)	Արցախի (6 բնակավայր)	Մեղրու(5բնակավայր)	Խոյի (38 բնակավայր)
Ազնաբերդ Օծոփ	Արրակունիս Գյաղ Նորաշեն Շահկերտ Շոռոթ Փորարաշտ	Բիստ Մեքուպական Ողոնի Ռամիս Փառակա	ԾԱՀՈՒԿ ՇԱՀԱՊՈՆՔ ՆԱԽԻՋԵՎԱՆ ՆՈՐԱՇԵՆ Ալագոթգ-Մազրա Արաքլու Այլասատ Արագին Արինջ Բաբունք Գյոմուր Դաշարիս Դեր Դիդուվար Եմխանա Երնջակ Թագագյուղ Խալխալ Խանդուխյար Խալխու Կարախան- բեկլու Կզնուտ Կժածոր Կուլիբեկ Դիզա Հաջիվար Մամարգա Դիզա Մոխրաբլուր Նազարասպատ Ներքին Ազա Նորս Նորս-Մազրա Շմրթան Վարմագյար Վերին Ազա Վերին Ըզնորա Տամբատ Քեշտագ Քյարհմբեկ Դիզա

Դասական բարբառագիտությանը քաջածանոթ են Ագուլիսի 2, Ջուղայի 3 Արցախի 4, Մեղրու 5 եւ Խոյի 6 ուսումնասիրված բարբառները, ինչպես նա՞ւ Աստապատի խոսվածքը (անցյալում անվանվել է նաեւ ենթաբարբառ) 7 : Համեմատաբար «նորահայտ» բարբառ է Վայոց ձորի միջբարբառը (Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղեր, հյուսիսային Նախիջեւանի այժմ արդեն հայաթափ երկու բնակավայր՝ Նախիջեւան գավառի Ազնաբերդ եւ Ճահուկ-Շահապունիք գավառի Օծուի գյուղեր)։ Մինչեւ 1980-ական թվականները Վայոց ձորի միջբարբառի մասին սոսկ թուուցիկ հիշատակություններ կային բարբառագիտական գրականության մեջ 8 , որտեղ համարվում էր Արարատյան բարբառի խոսվածք։ Մեր հեղինակած մի քանի աշխատանքներով 9 եւ մենագրությամբ 10 պարզել ենք, որ Վայոց ձորի խոսվածքը Արարատյան բարբառի խոսվածք չէ, այն իր հատկանիշներով միջակա դիրք է գրավում Արարատյան եւ Ջուղայի բարբառների միջեւ, փոքր-ինչ հեռացած է Արցախի բարբառից. խոսվածքի եւ մերձակա բարբառների միջեւ աշխարհագրական եւ լեզվական մերձավորությունների համընկնման փաստը հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը։

Ներկայացվող քարտեզները ժամանակագրական փուլերով ընդհանուր պատկերացում են տալիս ինչպես տարածքի հայ բնակչության տեղաբաշխման, այնպես էլ 20-րդ դարի ընթացքում հայ բարբառների տարածման սահմանների մասին։ Արձանագրում են նաեւ վերջին տասնամյակներում իրենց իսկ բնօրրանում հայերենի մի շարք բարբառների ու խոսվածքների ոչնչացման իրողությունը, որոնց թվում են հատկապես բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող Ագուլիսի բարբառը (գոկերենը), որի վերջին կրողները մինչեւ 1988 թվականի վերջը ապրում էին Յդնա գյուղում, Աստապատի խոսվածքը (մարել է 20-րդ դարի կեսերին), Ջուղայի բարբառը (պահպանվել է միայն Սպահանի Նոր Ջուղա քաղամասում), ինչպես նաեւ Արցախի, Մեղրու, Խոյի բարբառների եւ Վայոց ձորի միջբարբառի տեղական տարբերակները։

² Ս. Սարգսյան. Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն), մաս 1-2, Մոսկվա, 1883: Հ. Աճառյան. Քննություն Ագուլիսի բարբառի, Երեւան, 1935:

³ Հ. Աճառյան. Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Երեւան, 1940:

4 Հ. Աճառյան. Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ, 1901:

5 Է. Աղայան. Մեղրու բարբառը, Երեւան, 1954:

6 Մ. Ասատրյան. Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երեւան, 1962:

7 Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 37, 45-46: Գ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, Երեւան, 1972, էջ 13-156:

8 Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն, Երեւան, 1947, էջ 73: Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երեւան, 1957, էջ 205:

9 Ա. Վարդանյան. Վայոց ձորի խոսվածքի հնչյունաբանությունը, Բանբեր Երեւանի համալսարանի, թիվ 1, 1983, էջ 71-83: Ա. Վարդանյան. Վայոց ձորի խոսվածքի ձեւաբանական առանձնահատկությունները (դրույթներ), Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր, Երեւան, 1986, էջ 107-108:

10 Ա. Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը, Երեւան, 2004:

Artak Vardanian
Doctor of Philology

DIALECTOLOGIC MAP OF NAKHIDJEVAN

After the annexation of the native Armenian Nakhidjevan to the Soviet Azerbaijan according to the notorious Kars treaty of March 16, 1921, due to the anti-Armenian policy of Azerbaijan not only a “white” genocide of the Armenian population of that territory, as well as destruction of the Armenian historical monuments being a constituent part of the world culture treasury were organized on a state level, but also a great number of Armenian traditional dialects were extinguished on their native soil.

The territory of Nakhidjevan includes Goghtn and Nakhtshavan provinces of Vaspurakan state, Sharur province of Ayrarat state and Tshahuk-Shahapunik and Yerndjak provinces of Syunik state of the historical Armenia. The crossroad location of Armenia between different historical states and, consequently, different ethnographical regions, as well as the mass migration of the population have promoted the dialectical diversity of Nakhidjevan District.

At the beginning of the 20th century Nakhidjevan District included nearly seventy settlements populated with Armenians, the majority of which (38 settlements) were speaking the subdialects of Khoy dialect (those having immigrated from Khoy-Salmast according to Turkmenchay treaty of 1828). After the notorious deportation by Shah Abbas in 1604-1605, the greater part of native Armenian settlements in Nakhidjevan became deserted. Despite the great migration that had taken place in this district due to historical circumstances some native sub dialects were also preserved - dialect of Agulis (town Agulis and neighboring villages), subdialect of Astapat (Astapat, Karmir Vank villages), transdialect of Vayots Dzor (Aznaberd village of Nakhtshavan province and Otsop dialects (northern villages of respectively Yerndjak and Goghtn provinces). As a result of the internal migration of the population, several inter-subdialects have emerged – Nakhidjevan-Aylapat (Khoy and Ararat dialects), Djulfa (Djugha and Khoy dialects), Orduar (Agulis and Khoy dialects) etc.

Due to crucial historical events (such as in 1604, 1828) the dialectical map of Nakhidjevan has undergone relevant changes. In the 20th century the following basic chronological phases can be distinguished:

a) Eve of the events of 1918-1920, when the Armenian population formed approximately 50% (the majority) of the whole population of the region;

b) Eve of the formation of the Soviet Socialist Autonomous Republic of Nakhidjevan in 1924, when the Armenian population constituted approximately 20% of the whole population of the region;

c) Eve of the ultimate de-Armenization of Nakhidjevan in 1988, when the Armenian population made up only 2% of the whole population of the region.

Based on the statistic-topographic data¹¹ of the Armenian population of Nakhidjevan at the beginning of the last century and our information about the existing subdialects of the region, below we present the settlements of the region populated by Armenians according to provinces and the subdialects existing there in the aforementioned three chronological phases.

S E T T L E M E N T S

Province Goghtn
(16 settlements)

ORDUAR, Bist, Der, Disar, Handamedj, Mesropavan, Lower Agulis, Lower Aza, Oghohi, Ramis, Upper Agulis, Tanakert, Tsgghna, Paraka, Kaghakik, Upper Aza

Province Nakhthshavan
(20 settlements)

NAKHIDJEVAN, Aznaberd, Alagyoj-Mazra, Aylapat, Astapat, Diduvar, Yemkhana, Yerndjak, Khalilu, Karakhanbeklu, Karmir Vank, Kulibek-Diza, Hadjivar, Mamarza-Diza, Mokhrablur, Nazarapat, Shmrtn, Tambat, Upper Iznoba, Kyarimbek-Diza

¹¹ Ա.Գ.Ռ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան). «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.)», Երևան, 1907, էջ 64-67:

Province Yerndjak
(10 settlements)

DJULFA, Abrakunis, Arazin, Gyagh, Kznut, Norashen, Shahkert,
Shorot, Djugha, Poradasht

Province Tshahuk-Shahapunik
(10 settlements)

TSHAHUK, SHAHAPONK, Arindj, Babonk, Gyomur, Khalkhal,
Kzhadzor, Nors, Nors-Mazra, Otsop

Province Sharur
(7 settlements)

NORASHEN, Alaklu, Dasharkh, Tazagyugh, Khanlukhlar,
Varmazyar, Keshtaz

D I A L E C T S

Dialect of Agulis
(8 settlements)

ORDUAR, Disar, Handamedj, Lower Agulis, Upper Agulis,
Tanakert, Tsghna, Kaghakik

Dialect of Djugha
(2 settlements)

DJULFA, Djugha

Dialect of Artsakh
(6 settlements)

Abrakunis, Gyagh, Norashen, Shahkert, Shorot, Poradasht

Dialect of Meghri
(5 settlements)

Bist, Mesropavan, Oghohi, Ramis, Paraka

Dialect of Khoy
(38 settlements)

TSHAHUK, SHAHAPONK, NAKHIDJEVAN, NORASHEN, Alagyozy-Mazra, Alaklu, Aylapat, Arazin, Arindj, Babonk, Gyomur, Dasharkh, Der, Diduvar, Yemkhana, Yerndjak, Tazagyugh, Khalkhal, Khanlukhlar, Khalilu, Karakhanbeklu, Kznut, Kzhadzor, Kulibek-Diza, Hadjivar, Mamarza-Diza, Mokhrablur, Nazarapat, Lower Aza, Nors, Nors-Mazra, Shmrtan, Varmazyar, Upper Aza, Upper Iznoba, Tambat, Keshtaz, Kyarimbek-Diza

Subdialect of Astapat
(2 settlements)

Astapat, Karmir Vank

Transdialect of Vayots Dzor
(2 settlements)

Aznaberd, Otsop

The studied dialects of Agulis¹², Djugh¹³, Artsakh¹⁴, Meghri¹⁵ and Khoy¹⁶, as well as Astapat subdialect¹⁷ are well known to the classical dialectology. Vayots Dzor transdialect is a relatively new one (nearly 10 native villages of Vayots Dzor, two presently de-Armenisized settlements of Northern Nakhidjevan – Aznaberd village of Nakhtshavan province and Otsop village of Tshahuk-Shahapunik province). Till 1980 there were merely fleeting mentionings about Vayots Dzor subdialect in the dialectological literature: it was considered to be a subdialect of Ararat

12 Ս. Սարգսյան. Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն), մաս 1-2, Մոսկվա, 1883: Հ. Աճառյան. Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935:

13 Հ. Աճառյան. Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Երևան, 1940:

14 Հ. Աճառյան. Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ, 1901:

15 Է. Աղայան. Մեղրու բարբառը, Երևան, 1954:

16 Մ. Ասատրյան. Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962:

17 Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 37, 45-46: Գ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 13-156:

dialect. Due to some of our investigations we managed to clarify that Vayots Dzor subdialect is not merely a subdialect of Ararat dialect¹⁸. With its peculiar features it holds intermediate position between Ararat and Djughha dialects and is a little distant form Artsakh dialect. Their geographical and linguistic similarities prove the native character of the transdialect.

The presented maps, according to chronological phases, give a general view about the distribution of the Armenian population, as well as the frontiers of the Armenian dialects spread in the 20th century. In the last decade it was registered that a number of native dialects and subdialects were destroyed in their cradle, among which there were Agulis dialect (zokeren), the last users of which lived in Tsgghna village till 1988, had Astapat subdialect (extinguished in the middle of the 20th century), Djughha dialect (preserved only in Nor Djughha region of Isfahan), as well as the local versions of Artsakh, Meghri, Khoy dialects and Vayots Dzor transdialect.

¹⁸ Ա. Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը, Երևան, 2004: